

ՍԱՄՎԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի
փորձագիտական վերլուծական բաժնի գլխավոր
մասնագետ

**ԻՐԱՎԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ՍԱՄԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ԻՍԱՍՏՈՎ**

«Սահմանադրական դատարանի մասին»
ՀՀ օրենքի¹ 63րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝
«Իրավական ակտի սահմանադրականությունը
որոշելիս սահմանադրական դատարանը գնահա-
տում է ինչպես այդ ակտը, այնպես էլ **ձևավորված
իրավակիրառական պրակտիկան**»: Մեր կարծիքով
օրենսդիրն ամրագրել է այս պահանջը՝ երաշխավո-
րելու սահմանադրական արդարադատության ամ-
բողջականությունը և սահմանադրական դատարա-
նի կողմից իր առջև դրված խնդիրների արդյունա-
վետ լուծումը: Որպեսզի առավել տեսանելի լինի
սահմանադրական արդարադատության շրջանակ-
ներում իրավակիրառական պրակտիկայի ուսում-
նասիրման խիստ կարևորությունը և անհրաժեշտու-
թյունը Սահմանադրության գերակայության ու ան-
միջական գործողության երաշխավորման հարցում,
անհրաժեշտ է անդրադառնալ դրա էությանը,
առանձնահատկություններին, դրա՝ հասարակա-
կան հարաբերությունների իրավական կարգավոր-
ման վրա ունեցած ազդեցությանը: Վերջինով է
առավելապես պայմանավորված իրավակիրառա-
կան պրակտիկայի նշանակությունը:

Գ. Ռիպերը նշում է. «Օրենքը դեռ ողջ իրա-
վունքը չէ: Այն իր կյանքի ընթացքում խուսափում է
իր ստեղծողի կողմից ճնշումներից, իսկ եթե այն կա-
ռավարում է դատավորներին, ապա իրավաբանա-
կան միջավայր է թափանցում դատական իշխանու-
թյան միջոցով, որը պարտավոր է կատարել դրա
պահանջները, ստիպել դրան ապրել»²:

Ն.Ն. Վոպլենկոյի և Ա.Պ. Ռոժնովի կողմից
իրականացվել է հիմնարար հետազոտություն իրա-
վակիրառական պրակտիկայի վերաբերյալ, որն իր
արտացոլումն է գտել համանուն մենագրության
մեջ³, որում տեղ գտած գիտական վերլուծությունը և
եզրահանգումները բազմիցս կկիրառվեն սույն հոդ-
վածի շրջանակներում:

Իրավակիրառական պրակտիկայի վերա-
բերյալ տրվում են տարաբնույթ մեկնաբանություն-
ներ: Մասնավորապես, էլեկտրոնային իրավաբա-
նական բառարանում տրվում է հետևյալ բնորոշու-
մը. «Իրավակիրառական պրակտիկան դատավոր-
ների և այլ իրավակիրառողների՝ համընդհանուր
ճանաչում ստացած, իրավաբանական նշանակու-
թյուն ունեցող վարքագիծն է՝ հիմնված իրավական
նորմերի ձևավորված մեկնաբանման, դրանց բացե-
րի և անհատականությունների լրացման վրա»⁴:

Ն.Ն. Վոպլենկոյի և Ա.Պ. Ռոժնովի բնորոշ-
մամբ իրավակիրառական պրակտիկան հասարա-
կական հարաբերությունների իշխանական անհա-

տական կարգավորման փորձն է, որը, ի լրումն իրա-
վական կարգավորման նորմատիվ համակարգի, մի
շարք դեպքերում հանդիսանում է իրավաբանական
գործերի լուծման հիմքը⁵: Նրանց կարծիքով դատա-
կան պրակտիկայի՝ «որպես դատական գործունեու-
թյան բաղադրատարրի և արդյունքի» կայացման
մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ
կոնկրետ գործով օրենքի կիրառման և արդարադա-
տական որոշում կայացնելու համար դատարանին
անհրաժեշտ է մեկնաբանել օրենքը, հստակեցնել
դրա իմաստը, կոնկրետացնել օրենքի՝ բառերի ձևով
արտահայտված հասկացությունները և դրանց արդ-
յունքում ստեղծել իրավադրույթ, որը թույլ կտա ճա-
նաչել օրենքի իմաստը և այն կիրառել կոնկրետ
դեպքում: Սակայն պրակտիկ գործունեության արդ-
յունքը միայն իրավադրույթներով չի սահմանա-
փակվում⁶:

Անհրաժեշտ է հիմք ընդունել այն հանգա-
մանքը, որ պրակտիկան պարզապես գործունեու-
թյուն չէ՝ այն գիտակցված, նպատակաուղղված
գործունեություն է:

Իրավակիրառման անհրաժեշտությունը ծա-
գում է այն ժամանակ, երբ իրավունքի իրացման
գործընթացի փուլերից մեկում պահանջվում է պե-
տաիշխանական լիազորություններով օժտված
իրավասու մարմնի միջամտությունը:

Գրականության մեջ որպես իրավակիրա-
ռական պրակտիկայի հիմնական տարրեր առանձ-
նացվում են հետևյալները՝

- մեկնաբանման նախադեպերը,
- իրավունքի կիրառման նախադեպերը,
- գործարար սովորույթը,
- կոնկրետացնող դատողությունները և են-
թաօրենսդրական ակտերը,
- ղեկավար պարզաբանումները և այլն⁷:

Ա.Բ. Վենգերովն առանձնակի ընդգծում է,
որ *մեկնաբանման նախադեպը* չի նույնանում երկրի
բարձրագույն դատական ատյանների կողմից յու-
րաբանչյուր գործով օրենքի պաշտոնական կազու-
ալ մեկնաբանման հետ, ինչը շատ տարածված է:
Հենց «նախադեպ» օրինակ և դրանով իսկ հասարա-
կական հարաբերությունների լրացուցիչ կարգավո-
րիչ լինելու հնարավորություն՝ դրան տալիս են
հետևյալ հատկանիշները՝

1. մեկնաբանվող նորմի իմաստին և իրա-
վունքի հիմնական սկզբունքներին համապատաս-
խանությունը,
2. դատական պրակտիկայի կողմից տեղի
ունեցած մեկնաբանման ընդունումը, այսինքն՝ հա-

մանման գործերով մի անգամ օրենքի ձևավորված ընկալման կիրառման բազմակիությունը,

3. մեկնաբանման ակտում իրավունքի նորմը՝ հայտնի նորմը, ընդհանուր բնույթի պատկերացումը, պարզաբանելու և կիրառելու առնչությամբ որոշակի դրույթի մշակումը, որը միջնորդավորված է հասարակական հարաբերությունների կրկնվող, էական առանձնահատկություններով,

4. մեկնաբանման նախադեպին այն հրապարակելու ձևով արտաքին դրսևորում տալը⁸:

Ընդհանրացնելով իրավական նորմի մեկնաբանման նախադեպի բնույթի վերաբերյալ գիտության մեջ առկա դատողությունները՝ նշված աշխատանքում հեղինակներն առանձնացնում են դրա հետևյալ հիմնական հատկանիշները՝

1. Մեկնաբանման նախադեպը հանդիսանում է, որպես կանոն, կոնկրետ իրավակիրառական գործը լուծելիս կիրառման ենթակա իրավական նորմի կազույ պատկերացման արդյունք, իրավակիրառական մեկնաբանումից ծնված և դրանով պայմանավորված արտադրանք⁹:

Կոնկրետ գործի շրջանակներում մեկնաբանման արդյունքում իրավակիրառող մարմինը՝ առավելապես դատարանը, վերջնական և հստակ բովանդակություն է հաղորդում իրավական նորմին: Որպես մեկնաբանման նախադեպ, այն զննատեսություն համար անհրաժեշտ է հաշվի առնել, թե ինչքանով է այն վերաժվում իրավահարաբերություններ կարգավորողի՝ հետագայում իր կամ այլ դատարանների կողմից համանման գործեր լուծելիս:

Իրավակիրառական պրակտիկայի, մասնավորապես, դատական պրակտիկայի կարևորության վերաբերյալ հիշատակման է արժանի Չեխիայի Հանրապետության սահմանադրական դատարանի 08.04.2007 թվականի որոշումը, որտեղ վերջինս իրավական դիրքորոշում է արտահայտել, որ դատական պրակտիկան անխուսափելիորեն հանգեցնում է զարգացման և միշտ առկա է հնարավորությունը, որ այն կարող է լրացվել նոր մեկնաբանողական եզրահանգումներով կամ նույնիսկ ամբողջությամբ փոխվել:

Դատական որոշումների կայացման պրակտիկայի փոփոխությունները ցանկալի չեն, հատկապես բարձրագույն դատարաններում, որոնց խնդիրն է միասնականացնել ստորադաս դատարանների գործունեությունը, քանի որ դրանք խախտում են իրավունքի գերակայության սկզբունքը, մասնավորապես, դատական որոշում կայացնելու կանխատեսելիության սկզբունքը: Այդ պատճառով ներկա կարգավորումը սահմանադրական դատարանին տալիս է առկա դատական պրակտիկայից տարբերվող այլ պարտադիր ուժ ունեցող որոշում ընդունելու իրավասություն, իսկ դատարանները պարտավոր են զգույշ և զուսպ վարվել դատական պրակտիկայի տարբեր դրսևորումների հետ ու, թեև նման ընթացակարգ օրենքով նախատեսված չէ, հատուկ դեպքերում շեղվել կանխատեսելիության սկզբունքից՝ ներկայացնելով հիմնավոր պատճառներ պրակտիկայից տարբերվող որոշում կայացնելու համար¹⁰:

2. Ա.Բ.Վենգերովի և Պ.Ա. Գուկայի կարծիքով մեկնաբանման նախադեպը կոնկրետ գործով ընդունված իրավակիրառական (առավելապես դատական) որոշումն է, որն ստեղծում է օրենքում (իրավունքի նորմում) բովանդակվող իմաստի ավելի հս-

տակ ձևակերպում¹¹: Սրա արդյունքում տրվում է մեկնաբանման նախադեպի հետևյալ բնորոշումը.

«Մեկնաբանման նախադեպն ինչպես իրավակիրառողի կողմից պետական կամքի ավելի ճիշտ ընկալումն է, որն իր տառացի (ճիշտ, համարժեք) արտացոլումը չի ստացել նորմատիվ ակտի տեքստի բառային շարադրանքի մեջ, այնպես էլ պետական կամքի ավելի ճիշտ մեկնաբանությունն է, դրա հարմարեցումը կոնկրետ իրավակիրառական իրավիճակի լուծման պահին իրավակիրառողի մոտ առկա և իրավունքի ավանդական իրավաբանական աղբյուրներում ամրագրված իրավական նորմերին¹²:

Իրավական նորմերի կիրառման ընթացքում առաջանում են իրավական կոլիզիաներ, որոնք իրավական կոմունիկացիայի ընթացքում ծագող խոչընդոտների տարատեսակ են: Իրավական կոլիզիաները լուծելու, իրավական կոմունիկացիան վերականգնելու ճանապարհները բավականին շատ են, որոշակի տեսակի վարքագծային իրավական կոլիզիաներ կարող են վերացվել միայն պետության իշխանական, լեգիտիմ և կոմունիկատիվ-իրավական գործունեության ճանապարհով¹³:

«Մեկնաբանությունը, - գրում է Ի.Ա. Իվանիկովը, - երևույթի էության մտավոր վերլուծության ճանապարհով նախկինում անհայտ ինչ-որ բանի բացատրությունն է կամ մեկնաբանությունը: Որպես անհատական պատկերացում հանդես եկող մեկնաբանությունը կարող է հետագա ճանաչման և հասկացության-եզրույթային լեզվական ձևակերպման գործընթացում վերաժվել իրավական նորմի»¹⁴:

Հեղինակներն ուշադրություն են դարձնում նաև այն կարևոր հանգամանքի վրա, որ որոշ դեպքերում իրավունքը կիրառող մարմինները և դրանց պաշտոնատար անձինք նորմը մեկնաբանելիս առաջնորդվում են «արդարության և հավասարության մասին սեփական պատկերացումներով՝ ներկայացնելով դրանք որպես օրենսդրի մտադրություն»¹⁵:

3. Ինչպես արդարացիորեն նշում են որոշ հեղինակներ մեկնաբանման նախադեպի պարտադիր հատկանիշ է հանդիսանում դրա հրապարակումը, որը բացահայտում է նախադեպի տեղեկատվական բնույթը: Միայն այդ դեպքում է մեկնաբանման նախադեպը վերաժվում իրավունքի ոչ ավանդական աղբյուրի և հասարակական հարաբերություններ կարգավորողի¹⁶:

4. Մեկնաբանման նախադեպի իրավական նորմի նոր ընկալումն է, որը պարունակվում է օրինական ուժի մեջ մտած և վերադաս դատական ատյանների կողմից չբեկանված դատական որոշումներում¹⁷:

Ներկայումս անհնար է վիճարկել այն փաստը, որ դատական համակարգը, հետևաբար նաև դատավորները իրավունք ստեղծողի դեր են կատարում: Այնուամենայնիվ, դատավորների շարժում և «տուրք» առաքելության հայեցակարգը չի կարող հանգեցնել դատավորների՝ հնարավոր բարեփոխումների իրականացման կամ դատական ընդդատությանը վերապահված որոշ կատեգորիաների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու ճանապարհով դատական համակարգը հասարակությունը վերափոխելու գործիքի վերաժելու իրավունքի ամրագրմանը¹⁸:

5. Մեկնաբանման նախադեպի կարգավորիչ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ներուժը կայանում է ոչ միայն իրավակիրառական ակտում պարունակվող մեկնաբանման նորույթով և պահանջվածությամբ, այլ նաև դրա համոզիչ լինելով: Վերջինս առկա է, եթե իրավական նորմի նոր մեկնաբանությունը ա) տեղավորվում է պետության կողմից իրականացվող իրավակիրառական քաղաքականության շրջանակներում, բ) համապատասխանում է արդարության և համամարդկային արժեքների վերաբերյալ հասարակության ձևավորված պատկերացումներին, գ) համապատասխանում է դատավորների կամ իրավակիրառող մարմինների այլ պաշտոնատար անձանց պրոֆեսիոնալ իրավագիտակցությանը, դ) համապատասխանում է սահմանադրական և այլ ճյուղային օրենսդրության ընդհանուր հիմունքներին և սկզբունքներին, ե) կիրառման համար պարզ է և իրավակիրառող մարմնի պաշտոնատար անձի համար չի պահանջում որևէ էական մտավոր-կամային պայմաններ, զ) իրավակիրառական ակտում շարադրված է ձևական տրամաբանության օրենքներին համապատասխան, զգաստ, հետևողական և պրոֆեսիոնալ իմաստով «գեղեցիկ»¹⁹:

Վերոնշյալի առնչությամբ ուշագրավ է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴ-Ո665 որոշմամբ ցուցաբերած մոտեցումը, որում, մասնավորապես, փաստվում է. «Ինչպես վկայում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վճռաբեկ դատարանների կայացրած որոշումների ուսումնասիրությունը, այդ դատական ատյանները ՀՀ քաղ. դատ. օր.ի 160 հոդվածի 1ին կետի 2րդ պարբերությունում տեղ գտած ձևակերպումը մեկնաբանել են առանց հաշվի առնելու ՀՀ քաղ. օր.ի 14 և 15 հոդվածների և ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1ին կետի պահանջները: Եթե ընդհանուր իրավասության դատարանները փորձել են ՀՀ քաղ. դատ. օր.ի 160 հոդվածի 1-ին կետի 2րդ պարբերության դիսպոզիցիան գոգորդել ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1ին կետի բովանդակության հետ, ապա ակնհայտ է, որ սահմանադրական այդ նորմը չի պարունակում այնպիսի դրույթ, որը կարող էր հիմք ծառայել քաղաքացու դիմումը մերժելու համար: Նման մերժումը կարող էր արդարացվել միայն այն դեպքում, եթե Սահմանադրությամբ սահմանադրական դատարանին վերապահված լիներ ՀՀ քաղ. դատ. օր.ի 160 հոդվածի 1ին կետի 2րդ պարբերությունում վկայակոչվող իրավական ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցի որոշման իրավասությունը, ինչն առկա է շատ երկրներում: Սակայն ՀՀ օրենսդրությունն այդ իրավասությունը վերապահել է ընդհանուր իրավասության դատարաններին: Հետևաբար, դատավարական նորմերը դատարանների լիազորությունների իրացման երաշխիք պետք է ապահովեն, այլ ոչ թե խոչընդոտեն դրանց իրականացմանը՝ ստեղծելով իրավական վակուում:

Քաղ. դատ. օր.ի 160 հոդվածի 2րդ պարբերության՝ նման ձևակերպմամբ առկայությունը և իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը խոչընդոտում են իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների իրականացումը՝ դատական կարգով բողոքարկելու որոշակի ակտերի՝ օրենքին համապատասխանության հարցը, որի հետևանքով վտանգվում է արդարադատության մի ամբողջ ինստիտուտ»²⁰:

Սահմանադրական դատարանը, ուսումնա-

սիրելով դատարանների՝ վիճարկվող նորմի վերաբերյալ ունեցած պատկերացումները, հանգել է այն համոզման, որ թեև նորմը հստակ չէ և այդ անհստակությունը դատարանները վերացրել են իրենց կողմից տրված մեկնաբանման միջոցով՝ դրանով իսկ որոշակի բովանդակություն տալով վիճարկվող նորմին, այնուամենայնիվ, այդ մեկնաբանությունը մատուցվում է իրավունքի սուբյեկտներին որպես օրենքի բովանդակություն, օրենսդրի կամք և այդ մեկնաբանությունը չի բխում Սահմանադրության պահանջներից:

Իրավակիրառական պրակտիկայի երկրորդ կարևորագույն տարրը հանդիսանում է *իրավական նորմի կիրառման նախադեպը*, որն ընդհանրացված տեսքով իրենից ներկայացնում է *իրավունքի որոշակի նորմերի ընկալման և կիրառման վերաբերյալ իրավաբանական պրակտիկայում մշակված ստանդարտացված կանոն*, որը դրսևորվում է 1) միասեռ կատեգորիայի գործերով այս կամ այն նորմը՝ դրա տեղի ունեցած սկզբունքային մեկնաբանման համատեքստում ստանդարտացված տիպային լայնատարած կիրառելու կամ 2) միասեռ կատեգորիայի գործերը լուծելիս նորմերի՝ տարերայնորեն ձևավորված և աստիճանաբար նույնականացված կիրառումն՝ առանց կոնկրետ գործով իրավունքի կիրառման անհատական ակտում դրան պաշտոնական հեղինակավոր մեկնաբանություն տալու կամ 3) միասեռ գործերով սպացույցների նվազագույն թույլատրելի համակցության, գործի լուծման համար էական հանգամանքների առկայության կամ բացակայության վերաբերյալ դատողության և, վերջին հաշվով, իրավակիրառական գործի փաստացի հիմքի իրավաբանական որակման համար դրանց բավարար և որակյալ լինելու պահանջներ մշակելու մեջ²¹:

Իրավակիրառական պրակտիկայի ձևավորման հաջորդ օղակը նախադեպությունից բխող իրավադրույթն է²²: Սույն հոդվածի շրջանակներում չանդրադառնալով իրավադրույթի էությանն ու բովանդակությանը՝ կարևոր ենք համարում ընդգծել դրա կարևորությունն իրավահարաբերությունները կարգավորելիս: Ս. Ի Վիլյանսկիի կարծիքով դատական պրակտիկան դատարանների կողմից միասեռ կոնկրետ գործեր լուծելիս ձևավորված իրավական դրույթներն են, որոնք մշակվել են համապատասխան օրենքով սպառնիչ ամբողջականությամբ և հստակությամբ չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառելու արդյունքում²³:

Կարելի է առանձնացնել իրավադրույթի բովանդակությունը բացահայտող հետևյալ ընդհանուր հատկանիշները.

- իրավադրույթն իրենից ներկայացնում է իրավաբանական նորմերի կիրառման առնչությամբ կայուն տիպային որոշում, որն իրականում ձեռք է բերում ընդհանուր կանոնի գծեր,
- իրավադրույթները կյանքի են կոչվում իրավակիրառման ոչ ստանդարտ իրավիճակներով՝ ա) գործող պոզիտիվ իրավունքի նորմերի անհստակությամբ, վերացականությամբ և չափազանց ընդհանրացվածությամբ, բ) իրավունքի և օրենքի բացով, գ) իրավունքում համեմատաբար որոշակի դիսպոզիցիաների և սանկցիաների գոյությամբ, որտեղ կոնկրետ իրավիճակի լուծումը դրվում է իրավական նորմը կիրառող մարմնի կամ պաշտոնատար անձի հա-

www.lawinstitute.am

յեցողությունից կախվածության մեջ, դ) տեքստի մեջ չափազանց վերացական իրավական նորմերի առկայությամբ, այսինքն՝ «գնահատողական հասկացությունները», ե) «իրավական վակուումի» իրավիճակի առկայությունը, որտեղ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների համար ակնհայտ է, բնագոյաբար կամ հստակ գիտակցվում է, որ այս կամ այն իրավիճակը, հասարակական հարաբերությունն սկզբունքորեն պետք է կարգավորվի իրավական նորմերով, միևնույն ժամանակ, ավանդական աղբյուրը բացակայում է օրենսդրի կողմից պետաիրավական կյանքի տեմպից և դինամիկայից հետ մնալու պատճառով, գ) այսպես կոչված «օրենսդրի որակյալ լրության» իրավիճակի առկայությունը, երբ վերջինս հատուկ օրենքի տեքստում չի կարող կամ չի ցանկանում ներառել նորմի տարրերը բավարար հստակությամբ և ամբողջականությամբ:

Իրավադրույթի իրավակարգավորիչ ներուժն իրացվում է իր կողմից իրավական նորմի մասը կոնկրետացնելու միջոցով և այդ դեպքում իրավադրույթը կարելի է անվանել իրավաբանական նորմի մաս՝ ստեղծված իշխանական իրավաիրացման գործընթացում:

• Իրավադրույթն իրավաբանական պարտադիրությամբ օժտված վարքագծի կանոն է և այլն²⁴:

Իրավակիրառական պրակտիկայի հաջորդ տարրը իրավակիրառական գործունեության սովորությունն է, որն իրենից ներկայացնում է դատարանի (դատավորի), իրավունքը կիրառող այլ մարմնի կամ պաշտոնատար անձի ստերեոտիպային, բազմաթիվ անգամներ կրկնվող վարքագիծ, որը կապված է իրենց էական հատկանիշներով համընկնող իրավակիրառական իրավիճակների լուծման նպատակով իրավական նորմերի իրացման հետ: Ընդ որում, իրավակիրառողների այս համընդհանուր ընդունված վարքագիծը հիմնվում է իրավական նորմերի ձևավորված մեկնաբանության կամ դրանց բացերը և անհստակությունները լրացնելու վրա, որոնք ամփոփված են սովորույթի մեջ և ստացել են իրավադրույթի կարգավիճակ²⁵: Իրավակիրառական պրակտիկայի սովորությունը, որպես կանոն, ձևավորվում է բարձրագույն դատական ատյանների պրակտիկայում, ինչպիսիք են, օրինակ, սահմանադրական դատարանը, վճռաբեկ դատարանը և այլն:

Այսպիսով, սովորությունն իրավադրույթի «մաքրումն» է և դրա կազմակերպական ձևակերպվածությունը որոշակի բանաձևի տեսքով, որի հիման վրա հեղինակները պնդում են, որ այն իրավակիրառողների իրավական դիրքորոշման հստակ և կոնկրետ դրսևորումն է, որն իր մեջ միավորում է դոկտրինան, սովորույթը և պրակտիկան²⁶:

Ամփոփելով իրավակիրառական պրակտի-

կայի վերաբերյալ ծավալուն վերլուծությունը՝ հեղինակները ուշադրություն են դարձնում բարձրագույն դատական ատյանների՝ հատկապես սահմանադրական դատարանի կողմից իրավաստեղծ մեկնաբանման վրա, որը չի նույնանում դատական մախարեայի հետ: Ըստ նրանց իրավաստեղծ մեկնաբանությունը ՌԴ բարձրագույն դատական ատյանների կողմից իրավական նորմերի դատասահմանադրական վերահսկողության կարգով վերջիններիս մեկնաբանման իրականացումն է, որի արդյունքում իրավաբանական ուժից զրկվում են սահմանադրական օրենսդրությանը հակասող իրավական նորմերը: **Իսկ դրա արդյունքում կայացված ակտն իր պատճառաբանական մասով դառնում է իրավունքի աղբյուր այնքանով, որքանով որ հստակեցնում և պարզաբանում է սահմանադրական տեքստի վերացական դրույթները**²⁷:

Հաշվի առնելով իրավակիրառական պրակտիկայի գործնական նշանակությունը և հետագայում դատական պրակտիկայում կանխատեսելիության և սահմանադրականության սկզբունքների պահպանման անհրաժեշտությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԳ-ՈՂ75 որոշման եզրակացված մասում հակիրճ ձևակերպել է վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ նույն որոշման պատճառաբանական մասում հստակ շարադրելով նշված բովանդակության հիմնավորումները, և միաժամանակ նշել, որ «**Իրավակիրառական պրակտիկայում տվյալ հասկացությունները չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ սույն որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը**»:

Ելնելով վերոգրյալից և վերլուծելով ՀՀ սահմանադրական դատարանի բազմաթիվ որոշումները²⁹՝ գտնում ենք, որ անխուսափելի է այն եզրահանգման գալը, որ օրենքի դրույթների սահմանադրականությունը գնահատելիս, սահմանադրական դատարանը ոչ միայն կարող է, այլ նաև պարտավոր է³⁰ գնահատել իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակությունը, պարզել, թե ինչպես է իրավակիրառողն օրենքը մատուցում անձանց, ում վրա տարածվում է այդ օրենքի գործողությունը, քանի որ իրականում և փաստացի առկա հարաբերությունների որակից է կախված երկրում սահմանադրականության մակարդակը, և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միջոցով է ցանկալին դառնում իրական, անցնում սահմանադրությունից դեպի սահմանադրականություն ճանապարհը³¹, ինչը պետք է լինի բոլոր, առանց բացառության, իրավակիրառ մարմինների և, հատկապես, բոլոր դատարանների ամենօրյա բարեխիղճ աշխատանքը:

www.lawinstitute.am

¹ Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» (այսուհետ՝ ՄԳ մասին ՀՀ օրենք) ՀՀ օրենքի աղբյուրը՝ http://www.concourt.am/armenian/law_cc/index.htm
² Տե՛ս Жан-Луи Бержель. *Общая теория права*. Под общей редакцией Даниленко В.И. Москва. NOTA BENE, 2000. С. 536.
³ Տե՛ս Вовленко Н.Н., Рожнов А.П. *Правоприменительная практика: понятие, основные черты и функции*, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004.
⁴ Տե՛ս <http://dic.academic.ru/dic.nsf/lower/17411>

- ⁵ Տե՛ս Վոլլենկո Ն.Ն., Րոժնով Ա.Պ. *Правоприменительная практика: понятие, основные черты и функции*, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 113.
- ⁶ Տե՛ս նույն տեղում՝ էջ 66.
- ⁷ Տե՛ս Վոլլենկո Ն.Ն., Րոժնով Ա.Պ. *Правоприменительная практика: понятие, основные черты и функции*, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 114-115.
- ⁸ Տե՛ս նույն տեղում՝ էջ 117.
- ⁹ Տե՛ս նույն տեղում՝ էջ 119.
- ¹⁰ Տե՛ս Ռոդոնյան աղբյուրը՝ «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) «CODICES» տեղեկատու համակարգ՝ CZE-2007-1-005, <http://www.codices.coe.int/NXT/gateway.dll?f=templates&fn=default.htm>
- ¹¹ Տե՛ս Վոլլենկո Ն.Ն., Րոժնով Ա.Պ. *Правоприменительная практика: понятие, основные черты и функции*, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 123-124.
- ¹² Տե՛ս նույն տեղում՝ էջ 130.
- ¹³ Տե՛ս Սոլոյան Ա.Վ. *Общая теория права: Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода*, Санкт-Петербург, Издательство Санкт-Петербургского государственного университета, 2004. С. 792.
- ¹⁴ Տե՛ս Չեպурնովա Ն.Մ., Սերեգին Ա.Վ. *Теория государства и права. Учебное пособие*, Москва, 2008. С. 333.
- ¹⁵ Տե՛ս Վոլլենկո Ն.Ն., Րոժնով Ա.Պ. *Правоприменительная практика: понятие, основные черты и функции*, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 131.
- ¹⁶ Տե՛ս նույն տեղում՝ էջ 132-133.
- ¹⁷ Տե՛ս նույն տեղում՝ էջ 138-139.
- ¹⁸ Տե՛ս Ջան-Լյու Բержель, *Общая теория права*. Под общей редакцией Даниленко В.И. Москва, NOTA BENE, 2000. С. 536.
- ¹⁹ Տե՛ս Վոլլենկո Ն.Ն., Րոժնով Ա.Պ. *Правоприменительная практика: понятие, основные черты и функции*, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 139.
- ²⁰ Տե՛ս <http://www.concourt.am/armenian/decisions/common/2006/sdv-665.htm>
- ²¹ Տե՛ս Վոլլենկո Ն.Ն., Րոժնով Ա.Պ. *Правоприменительная практика: понятие, основные черты и функции*, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 146-147.
- ²² Տե՛ս նույն տեղում՝ էջ 147.
- ²³ Տե՛ս Վոլլենկո Ն.Ն., Րոժնով Ա.Պ. *Правоприменительная практика: понятие, основные черты и функции*, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 147.
- ²⁴ Տե՛ս Վոլլենկո Ն.Ն., Րոժնով Ա.Պ. *Правоприменительная практика: понятие, основные черты и функции*, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 160.
- ²⁵ Տե՛ս նույն տեղում՝ էջ 172.
- ²⁶ Տե՛ս նույն տեղում՝ էջ 174.
- ²⁷ Տե՛ս Վոլլենկո Ն.Ն., Րոժնով Ա.Պ. *Правоприменительная практика: понятие, основные черты и функции*, Монография, Волгоград: Изд-во ВолГУ, 2004. С. 192.
- ²⁸ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-975 որոշումը, աղբյուրը՝ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-975.pdf>.
- ²⁹ Տե՛ս ՍԳՈ-665, ՍԳՈ-753, ՍԳՈ-844, ՍԳՈ-930, ՍԳՈ-943 որոշումները:
- ³⁰ Տե՛ս Եթե նույնիսկ օրենքով մնան պահանջ չնախատեսվի, դա չի կարող խոչընդոտ հանդիսանալ սահմանադրական արդարադատության համար այդ կենսական կարևոր նշանակություն ունեցող պահանջը հաշվի առնելու համար:
- ³¹ Տե՛ս Արսյույան Գ. *Слагаемые конституционализма: верховенство права, стабильное развитие*, Конституционное правосудие. Выпуск 2(52)2011. Ереван 2011. С. 16. http://www.concourt.am/armenian/con_right/2.52-2011/vestnik52.pdf

РЕЗЮМЕ

Конституционно-правовое содержание правоприменительной практики в контексте Закона РА о Конституционном Суде

В рамках конкретного дела, в результате толкования, правоприменительный орган, в основном суд, формулирует окончательное и точное содержание правовой нормы. Чтобы оценить это как прецедент толкования, нужно иметь в виду, насколько такое толкование становится регулятором правоотношений в тех случаях, когда суды рассматривают подобные дела. Судебная практика - это правовые положения, которые сформировались в результате рассмотрения судами однородных дел.

Акты высших судебных инстанций со своими мотивирующими частями становятся источниками права настолько, насколько конкретизируют и разъясняют абстрактные положения конституционного текста.

SUMMARY

The notion of the "law application practice" in the context of the Law of RA "On the Constitutional Court"

In frames of a specific case, a law enforcement authority (generally a court) interpreting the law formulates definitive and precise meaning of a legal norm. In order to treat it as a precedent of interpretation, one needs to take into consideration to what extent this interpretation applies to legal relationships in other cases of similar nature tried at the court of law. Judicial practice is comprised of legal positions elaborated as a result of adjudication of cases of the same category. The acts of highest judicial authorities with their motivating parts become the source of law to the degree to which they specify and interpret abstract provisions of the text of Constitution (or constitutional text).